ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «24» 03 2021թ N° 225-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N104-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N262-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 5-ի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը 2021 թվականի ծրագիրը, 2021 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N104-Ա հրամանում (այսուհետ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները՝

   1) Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի,

   2) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N2 հավելվածի:

24/03/2021

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2021 թվականի «մարտի 24- ի »
N 225-Ա հրամանի
«Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2021 թվականի փետրվարի 5-ի
N104 - Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»
ԶԲՈՍԱ՛ՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Կատարողը (համակատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
	1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ					
1.1	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում**	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրության բարելավում	Առկա ներդրված համակարգչային ծրագրի սպասարկում Զբոսաշրջային այցելությունների քանակի, զբոսաշրջիկների սեռի, տարիքի, քաղաքացիության վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացում	Զբոսաշրջության կոմիտե ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (համաձայնությամբ)	2021թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ						
2.1.	Հայաստանի մասին սոցիալական ցանցերում և այլ թվային հարթակներում գովազդատեղեկատվական նյութերի հրապարակում և առաջխաղացում	Թվային հարթակներում Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացում և նպատակային այցելուների գրավում՝ սոցիալական ցանցերում գովազդների (FB, Instagram, Twitter), առաջատար ճամփորդական հարթակների (TripAdviser, Booking.Com, Sletat.ru) հետ համագործակցություն համատեքստային գովազդի միջոցով, ինչպես նաև Armenia.travel վեբ կայքի առաջխաղացում Google, Yandex որոնողական համակարգում (SEO):	Հայաստանի մասին գովազդային հրապարակումներ FB, Instagram, նաև Twitter սոցիալական հարթակներում՝ չափելով արդյունավետությանը հետևյալ չափանիշների միջոցով՝ Cost per click (CPC), Click Through Rate (CTR), Cost per action (CPA), reach, impressions Armenia.travel կայքը հայտնվում է Google, Yandex որոնողական համակարգերի թոփ սանդղակում բարձր հաճախականությամբ բանալի բառերի միջոցով Ըստ Զբոսաշրջության կոմիտեի պատվերի Հայաստանին նվիրված էջ և/կամ գովադատեղեկատվական նյութերի հրապարակում առաջատար ճամփորդական հարթակներում (TripAdviser, Booking.com, Sletat.ru) Բանալի բառերով կամ թեմատիկ համատեքստային	Զբոսաշրջության կոմիտե	2021թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			գովազդների տեղադրում Google AdSense և/կամ Google Ad Manager-ի գործիքների կիրառմամբ			
2.2.	**Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն և տպագրություն**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացման և խթանման նպատակով գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն՝ տարբեր լեզուներով և բովանդակությամբ և տպագրություն	Առնվազն 30000 հատ գովազդատեղեկատվական նյութեր՝ ըստ Զբոսաշրջության կոմիտեի պատվերի, այդ թվում - բրոշյուրներ, թարգմանված տարբեր լեզուներով - թռուցիկներ, - քարտեզներ - թղթապանակներ - թղթե տոպրակ - բաներ - օրացույցներ՝ նոթատետր և սեղանի - տեղեկատվական այլ նյութեր	Զբոսաշրջության կոմիտե	2021թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2.3	**Նպատակային շուկաներից օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացում օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների համար ճանաչողական այցերի կազմակերպման միջոցով	առնվազն 2 նպատակային շուկաներից ճանաչողական այցեր Հայաստանը ներկայացնող նյութերի (տպագիր կամ էլեկտրոնային հոդված, տեսահոլովակ և այլ) հրապարակում առաջատար մասնագիտացված պարբերականներում և սոցիալական ցանցերում	Զբոսաշրջության կոմիտե	2021թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.4.	**Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում**	Միջազգային հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդային հոդվածներ՝ սոցիալական հարթակներում տարածելու և հարթակների ներգրավվածությունը բարձրացնելու համար	Առնվազն 5 հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածներ (ըստ Զբոսաշրջության կոմիտեի պատվերի)	Զբոսաշրջության կոմիտե Օտարերկրյա հեղինակավոր պարբերաններում ներկայացնող արտերկրյա կազմակերպություն Համաֆինանսավորում կազմակերպող ֆիզիկական կամ իրավաբանական անձ	2021 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2.5	**Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում, հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում, ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն	Առնվազն 3 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ITB- Berlin 2021 (հեռահար), MITT Moscow 2021, ATM-2021, WTMLondon 2021 մասնակցություն	Զբոսաշրջության կոմիտե Միջազգային ցուցահանդես կազմակերպող արտերկրյա կազմակերպություն Համաֆինանսավորում կազմակերպող ֆիզիկական կամ իրավաբանական անձ	2021թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3. ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ						
3.1.	**Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոներ կազմակերպող կազմակերպություններին**	Համայնքներում զբոսաշրջության և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում, Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում՝ տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնում, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտում ու զարգացում	Առնվազն 5 փառատոների կազմակերպմանը պետական աջակցություն	Զբոսաշրջության կոմիտե	2021թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						

4.1.	**Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը**	ՀՀ մարզերում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում՝ տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական նյութերի տարածում, մեկ միջոցառման կազմակերպում	ՀՀ մարզերում առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցություն, մեկ միջոցառման կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե	2021թ. ընթացքում.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.2.	**Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացներին**	Զբոսավարների դասընթացների ծրագրի կազմում ու կազմակերպում, վերապատրաստման գործընթացի ապահովում	Զբոսավարների դասընթացների ծրագիր և վերապատրաստման գործընթաց՝ առնվազն երեք դասընթացների կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե	2021 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
5. Միջազգային համագործակցություն						

5.1	**Միջազգային համագործակցություն**	Գործընկեր և նպատակային շուկա հանդիսացող երկրների հետ երկկողմ համագործակցության ամրապնդում և առավել ակտիվացում Զբոսաշրջության իրավապայմանագրային պարտավորությունների իրականացում, համագործակցություն միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ՝ ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության առավել ակտիվացում, այդ թվում նաև Հայաստանում միջազգային նշանակալի միջոցառումների կազմակերպում	Հայաստանում առնվազն մեկ միջոցառման կազմակերպում կամ աջակցություն Միջազգային համագործակցության շրջանակներում միջոցառումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում, երկկողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում, պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների առնվազն 1 միջոցառմանը մասնակցության ապահովում ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների ու գործընկերների կողմից կազմակերպվող ծրագրերին, համաժողովներին, աշխատանքային հանդիպումներին, վերապատրաստումներին:	Զբոսաշրջության կոմիտե ՀՀ արտաքին գործերի նախարարություն (համաձայնությամբ)	2021թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

Հավելված 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2021 թվականի «մարտի 24 -ի
N 225-Ա հրամանի
Հավելված 3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2021 թվականի փետրվարի 5-ի
N104 -Ա հրամանի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ		
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»		
h/h	**ԾԱԽՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**	**2021թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները (հազար դրամ)**
1	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի սպասարկում**	1200.0
2	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**	132106.0
2.1	Հայաստանի մասին սոցիալական ցանցերում և այլ թվային հարթակներում գովազդատեղեկատվական նյութերի հրապարակում և առաջխաղացում	5500.0
2.2	Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, թարգմանություն և տպագրություն	19500.0
2.3	Նպատակային շուկաներից օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում	9106.0
2.4	Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում	23000.0
2.4.1	այդ թվում National Geographic Traveler ամսագրի Հայաստանի մասին հոդվածի հրապարակում	8000.0
2.5	Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին	75000.0
3	**ՀԱՅԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ**	11000.0
3.1	Պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոներ կազմակերպող կազմակերպություններին	11000.0

4	**ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**	13200.0
4.1	Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը	9000.0
4.2	Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացներին	4200.0
5	**Միջազգային համագործակցություն**	5910.0
5.1	Միջազգային համագործակցություն	5910.0
	Ընդամենը՝	163416.0
	ԱԱՀ	32690.0
	Ընդամենը	196106.0